ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/28/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 19 հուլիսի 2022 թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի հուլիսի 19-ին քննելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահե Վոլոդյայի Ղալումյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի հունիսի 23-ի N ՎԻՎ 28/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

I.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, հիմք ընդունելով lurer.com լրատվական կայքի հրապարակումը[1] և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, իրականացրել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահե Վոլոդյայի Ղալումյանի կողմից 2022 թվականի ապրիլի 18-ին ներկայացված ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի

[1] Lurer.com | «Ազգ ու տակով» պաշտոնյաները. Ղալումյանն ու Փաշինյանը լուրացնում են Տավուշի մարզը

գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի վերլուծություն, որի արդյունքում պարզել է.

ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Վահե Վոլոդյայի Ղալումյանին է պատկանում ՀՀ, Տավուշի մարզ, հասցեում գտնվող բնակելի տունը (անշարժ գույքի հաշվառման համարը՝ , ձեռք բերելու ամսաթիվը՝ 13.03.2014թ.), սակայն Վահե Ղալումյանը նշված անշարժ գույքը Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց գույքը»(Բ.1) բաժնի «Անշարժ գույքը»(Բ.1.1.) ենթաբաժնում չի հայտարարագրել:

1.2 Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 7-ին Վահե Ղալումյանին է հասցեագրել թիվ 01/1237-2022 ծանուցումը՝ Հայտարարագրում հայտնաբերված վերոշարադրյալ անհամապատասխանության վերաբերյալ՝ հրավիրելով 2022 թվականի հունիսի 23-ին վերջինիս ներկայությամբ կազմելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:

1.3 2022 թվականի հունիսի 23-ին պատշաճ ծանուցված Վահե Ղալումյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 29/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.4 Հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 23-ի թիվ ՎԻՎ 28/22 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտման հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ: Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 29/22 արձանագրությունը, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին ՎԻՎ 28/22 որոշումը՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին նշումով, համապատասխան ուղեկցող գրությամբ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է Վահե Ղալումյանին:

1.5 2022 թվականի հուլիսի 19-ին՝ ժամը 11:15-ին Վահե Ղալումյանի ներկայացուցիչ Էդգար Գևորգի Վարշամյանի մասնակցությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Վահե Վոլոդյայի Ղալումյանը Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է, որ Հայտարարագրի վերլուծության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունը թյուրիմացության արդյունք է և պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018 թվականի հայտարարագրում նշյալ գույքն անզգուշությամբ բաց է թողնվել, հետագայում այդ բացթողումն արտատպվել է հաջորդ հայտարարագրերում: Միաժամանակ, նշել է, որ հասցեում գտնվող անշարժ գույքն իրեն է պատկանում սեփականության իրավունքով և այն թաքցնելու ոչ մի միտում չի ունեցել:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակ Վահե Ղալումյանի ներկայացուցիչն ընդունել է, որ հայտարարագրման ենթակա տվյալներն ամբողջությամբ չեն ներառվել Հայտարարագրում և նշել, որ այսուհետ Վ. Ղալումյանն առավել ուշադիր կլինի հայտարարագիրը ներկայացնելիս, իսկ սույն գործով ի հայտ եկած թերությունների պատճառն անզգուշությունն է:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/28/22 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում՝

3.1 Վահե Վոլոդյայի Ղալումյանը Հայտարարագրում՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց գույքը»(Բ.1) բաժնի «Անշարժ գույքը»(Բ.1.1.) ենթաբաժնում, չի ներկայացրել ՀՀ, Տավուշի մարզ, հասցեում գտնվող բնակելի տունը (անշարժ գույքի հաշվառման համարը՝ ձեռք բերելու ամսաթիվը՝ 13.03.2014թ.): Մինչդեռ, ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ ՀՀ, Տավուշի մարզ, հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վահե Վոլոդյայի Ղալումյանին: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահե Վոլոդյայի Ղալումյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, հողին ամրակայված այլ գույքը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը:

4.3 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել

փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.6 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.8 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, հողին ամրակայված այլ գույքը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը,

համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը: Այդ ցանկն ամբողջական կերպով ներկայացված է նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուն հնարավորություն ունի ընտրել կոնկրետ գույքի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել է հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակել այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում (2021 թվականի ապրիլի 9-ի թիվ ՎԻՎ/02/21 և 2021 թվականի մարտի 18-ի թիվ ՎԻՎ/01/21 որոշումներ):

Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով Վահե Ղալումյանը Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց գույքը»(Բ.1) բաժնի «Անշարժ գույքը»(Բ.1.1.) ենթաբաժնում, ***անզգուշությամբ*** չի ներկայացրել ՀՀ, Տավուշի մարզ

Հասցեում գտնվող բնակելի տունը (անշարժ գույքի հաշվառման համարը՝ ձեռք բերելու ամսաթիվը՝ 13.03.2014թ.): Հետևաբար, Հայտարարագրում առկա է ***ոչ ամբողջական ներկայացված տվյալ:***

Վահե Ղալումյանը իր գրավոր դիրքորոշմամբ Հայտարարագրում անշարժ գույքի չհայտարարագրելը պատճառաբանել է անզգուշությամբ բաց թողնվելու հանգամանքով:

Նույն դիրքորոշումն է արտահայտվել նաև գործի քննության ընթացքում Վահե Ղալումյանի ներկայացուցչի կողմից:

Հաշվի առնելով արձանագրված խախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները, սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Վահե Ղալումյանը 2021 թվականի տարեկան հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման պահանջն է, որ Հայտարարագիրը պետք է ներառի հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող բոլոր անշարժ գույքերը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի դեպքում պարտադիր կերպով ներառվում են անշարժ գույքի տեսակի, գտնվելու վայրի հասցեի, գույքի հաշվառման համարի, մակերեսի, սեփականության տեսակի (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժնի, համասեփականատիրոջ բաժնի, նրա անվանման և նրանց միջև առկա կապի բնույթի, գույքը ձեռք բերելու տարվա և եղանակի վերաբերյալ տվյալները: Մինչդեռ, տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվությամբ Հանձնաժողովին տրամադրված ՀՀ, Տավուշի մարզ,

հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ նշված տվյալները ներկայացված չեն Վահե Ղալումյանի Հայտարարագրում:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, այլ առկա է Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք (հայտարարատուն ընդունել է հայտարարագրման ենթակա տվյալները հայտարարագրում չներկայացնելու արարքում իր անզգուշությունը):

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում անզգուշությամբ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար Վահե Վոլոդյայի Ղալումյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահե Ղալումյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Վահե Ղալումյանին տրամադրել եռօրյա ժամկետ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**